

A.G. SOLOMONYAN, LV. TOKMAJYAN

ARMENIAN NATIONAL CHARACTERISTICS IN DESIGN

The issue of Armenian national characteristics from the standpoint of interior design of public, particularly the residential areas. The relevance and importance of the issue raised is substantiated. The main goal and problems of further research work are outlined.

Keywords: national, environmental design, interior, value system, tradition, preservation of style.

ՀՏԴ 622.343 : 669.35-054.75(479.25)

Հ.Հ. ԹՈՔՄԱՋՅԱՆ

ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁՎԱԾ ՊՂՆՁԱԳՈՐԾՆԵՐԸ ԵՎ ՊՂՆՁԵ ԱՌԱՐԿԱՆԵՐԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Ներկայացվում են տվյալներ Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո Խորհրդային Հայաստան տեղափոխված արհեստավորների, նոր պայմաններում նրանց գործունեության որոշ առանձնահատկությունների մասին: Ուսումնասիրվում են նույն ժամանակաշրջանում Հայաստան տեղափոխված և կենցաղում օգտագործվող պղնձյա իրերի առանձնահատկությունները, Հայրենադարձների հետ Հայաստան տեղափոխված թանգարաններում և մասնավոր հավաքածուներում պահվող պղնձե առարկաների նմուշները:

Առանցքային բառեր. պղնձագործ, հայրենադարձ, արհեստ, ինքնություն, արտիֆակտ:

Վերջին տարիներին հայկական պղնձագործության վերաբերյալ նյութեր հավաքելիս առնչվեցինք մի շարք հետաքրքրական երևույթների: Մեր ուսումնասիրությունները վերաբերել են, մասնավորաբար, Սիրիային և հարակից շրջաններին: Տարածաշրջանում հարյուրավոր հայ վարպետներ են աշխատել, որոնք թողել են հարուստ նյութական ժառանգություն: Առաջին աշխարհամարտից հետո ցեղասպանությունից փրկված հայերի մի զգալի մասը հանգրվանեց Սիրիայում [1]: Նրանց մի մասը հետագայում հեռացավ երկրից տարբեր ուղղություններով: Հայ գաղթականների այն հատվածը, որը մնաց և հաստատվեց Սիրիայում, ինտեգրվեց տեղական կյանքին և մասնակցեց երկրի տնտեսական զարգացմանը: Պղնձագործները ևս իրենց կարևոր ներդրումն ունեցան տեղական արհեստագործության զարգացման մեջ: Մինչև 20-րդ դարի կեսերը Սիրիայի տարբեր քաղաքներում, շուկաներում աշխատող հայ վարպետներն իրենց հեղինակությամբ անմրցելի էին: Տեղի բնակչության համար «հայի գործը» որակի նշան էր: Այս

երևույթը ապացուցող բազմաթիվ փաստեր և վկայություններ կան: Մեր հետաքրքրությունը, սակայն, առնչվում է հետպատերազմյան (1941-1945) շրջանին և Հայաստանին:

Հայաստանի Հանրապետության մի շարք թանգարաններում (ՀԱԹ. Սարդարապատ, ՀՊԹ. Երևան, ԵՊԹ. Երևան, Կումայրի արգելոց-թանգարան. Գյումրի) պահվում են պղնձագործությանը վերաբերող բազմաթիվ կենցաղային առարկաներ, որոնք պատրաստված են Սիրիայում և տարածաշրջանում աշխատած վարպետների կողմից: Այս աշխատանքների մի զգալի մասը թանգարաններին նվիրել են մեր սփյուռքահայ հայրենակիցները:

Դաշտային աշխատանքների ընթացքում մեր ուշադրությունը գրավեց այն փաստը, որ Հայաստանի տարբեր բնակավայրերում, հավաքորդների մոտ օգտագործված առարկաների շուկաներում հանդիպում են հարյուրամյա պղնձե առարկաներ: Առաջին հայացքից այս իրողությունը կարող է սովորական թվալ, մանավանդ եթե նկատի ունենանք Սիրիայում 2011 թվին բռնկված պատերազմից հետո Հայաստան տեղափոխված շուրջ 23.000 հայերին: Նրանք, բնականաբար, իրենց հետ Հայաստան տեղափոխեցին կենցաղի հետ կապված բազմաթիվ առարկաներ: Միաժամանակ, անցուդարձին տեղյակ մարդիկ լավ գիտեն, որ մեր հայրենակիցների հնարավորությունները տեղափոխության ընթացքում խիստ սահմանափակ էին, և նրանք իրենց հետ վերցնում էին ամենաանհրաժեշտ և արժեքավոր առարկաները: Մեր օրերում արդեն իսկ ակնհայտ է, որ ամենակարևոր և անհրաժեշտ առարկաները տանը մնացած պղինձները չեն:

Ուստիև հարց առաջացավ, թե երևանյան հնավաճառների մոտ մերթ ընդ մերթ հայտնվող առարկաները ինչպես են հասել Հայաստան: Ժամանակի ընթացքում ի մի բերելով որոշ տվյալներ, եկանք այն եզրակացության, որ մեզ հետաքրքրող առարկաները Հայաստան են տեղափոխվել Երկրորդ աշխարհամարտից հետո հայրենադարձված հայերի միջոցով: Պատահական չէ, որ նրանք հիմնականում գտնվում էին Գյումրիում, Վանաձորում, Չարենցավանում (1965-66թթ.) և ընդհանրապես այն շրջաններում, որտեղ պետությունը բնակեցրել է հայրենադարձներին:

Պետք է նաև նկատի ունենալ, որ մինչև անցյալ դարի 40-50-ական թվականները պղնձե առարկաները գործածելի էին Մերձավոր արևելքում: Ավելին, պղնձե առարկան մշտապես եղել է ունեցվածքի, ընտանիքի բարեկեցության նշան [2]: Սիրիայից, Լիբանանից, Եգիպտոսից Հայաստան տեղափոխված հայերն իրենց տան կարևոր առարկաների հետ բերել են նաև իրենց պղնձեղենը:

Հետաքրքրական է նաև այն, որ մեզ համար կարևոր առարկաների մի մասը մեծ շրջապտույտ են կատարել մինչև Հայաստան հասնելը: Որպես

օրինակ կարող ենք հիշել Երևանում Հակոբյանների տանը պահվող մի փոքրիկ կաթսա: Այն այնթապցի հայտնի պղնձագործ Մովսես Անսրյանի գործն է: Նկատի ունենալով Հակոբյանների ընտանիքին բաժին հասած գաղթի ճանապարհը՝ պետք է արձանագրենք, որ կաթսան իր տերերի հետ Կիլիկիո Այնթապ քաղաքից հասել է Հալեպ, ապա Եգիպտոս՝ Ալեքսանդրիա: 1962թ. Եգիպտոսից տեղափոխվել է Խորհրդային Հայաստան՝ Լենինական, իսկ 1967թ. գտնվում է Երևանում:

Իմիջիայլոց, պետք է նկատի ունենալ, որ ժամանակի ընթացքում կենցաղից գրեթե դուրս մղված պղնձեղենը որոշ դեպքերում չի կորցրել իր նշանակությունը: Մերձավոր Արևելքի մի շարք երկրներում որոշ կերակուրներ, քաղցրավենիքներ առայսօր պատրաստվում են ավանդական եղանակով համապատասխան պղնձե կաթսաների մեջ: Մեր օրերում Հայաստանում պղնձե ամանները որոշ, աննշան բացառությամբ, դուրս են եկել կիրառությունից (օղի թորելու հարմարանքներ):

Մեզ հետաքրքրող հարցերից է նաև հայրենադարձված արհեստավորների ճակատագիրը: Այդ իսկ պատճառով աչքի անցկացրինք Հայաստանի պետական արխիվում պահվող ցանկերը: Բարեբախտաբար, ներգաղթի կազմակերպման ընթացքում կազմված անվանացանկերում նշված է յուրաքանչյուր ներգաղթողի մասնագիտությունը: Ստացված պատկերը հետևյալն է. Սիրիայից և Լիբանանից մի քանի փուլով Հայաստան ներգաղթած պղնձագործներն են. Տեր-Ներսիսյան Հովհաննես Գրիգորի, Քլեյան Գևորգ Սարգիսի, Ղազարյան Ավետիս Գևորգի, Փիսիթյան Հակոբ Ստեփանի, Թոփճյան Գարեգին Հարությունի, Պուտաքյան Եզիկել Հովհաննեսի, Թոփճյան Աբրահամ Կարապետի, Արսլանյան Կարապետ Նազարեթի, Գազեգյան Հակոբ Փանոսի, Մխարճյան Հակոբ Գրիգորի, Մինասյան Մինաս Նշանի, Գյուրքուչակյան Պետրոս Մարտիրոսի, Գանտահարյան Աբրահամ Գևորգի, Քաջոյան Գրիգոր Պողոսի (Բեյրութ), Քլեյան Գևորգ Սարգիսի (Սուր), Պողոսյան Մելտոս Տիգրանի (Բեյրութ), Սարաֆյան Մովսես Բենիամինի (Սուր), Թորոսյան Նազար Կարապետի (Բեյրութ), Տեր-Ներսեսյան Ավետիս Գրիգորի (Բեյրութ), Տեր-Ներսեսյան Հովհաննես Գրիգորի (Բեյրութ), Չիլգևորգյան Միսաք Սարգիսի (Բեյրութ), Չիլգևորգյան Անդրանիկ Միսաքի (Բեյրութ), Եափուճյան Սարգիս Սեդրակի (Բեյրութ), Եփրեմյան Սարգիս Հակոբի, Ջեյթունյան Գրիգոր Նազարի (Բեյրութ), Գարայան Կարապետ Մակարի, Գարայան Գրգիգոր Կարապետի և այլք [3]:

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ պղնձագործությանն անմիջապես առնչվող արհեստներից է կլայեկագործությունը, արձանագրենք ներգաղթած կլայեկագործների անունները ևս: Նրանք են՝ Եղոյան Գառնիկ Եղոյի, Նալպանտյան Հարություն Առաքելի, Աղպապյան Հակոբ Ավետիքի, Սարաֆյան Հարություն

Բենիամինի, Պոյաճյան Սարգիս Նազարեթի, Պոյաճյան Նշան Զատիկի (Բեյրութ), Պոյաճյան Գրիգոր Պողոսի (պղնձագործ-կլայեկագործ, Բեյրութ), Մըղըշյան Հակոբ Հարությունի, Ազյան Հակոբ Արթինի, Փապուճյան Հակոբ Արթինի, Գալայճյան Ստեփան Ճորճի, Գազանճյան Հովհաննես Թադեոսի (Բեյրութ), Եփրեմյան Մկրտիչ Եփրեմի (Տրիփոլի) [4]:

Անկասկած, կարևոր էր նաև հասկանալ, թե վերոհիշյալ պղնձագործերն ու կլայեկագործները նոր պայմաններին ինչպե՞ս հարմարվեցին, կարողացա՞ն արդյոք շարունակել իրենց գործը Խորհրդային Հայաստանում:

Հայաստանում հաստատված արհեստավորների մասին մեր հավաքած տեղեկությունները շատ քիչ են: Հավանաբար, այս երևույթը պայմանավորված է նրանով, որ նրանց մեծ մասը, թողնելով արհեստը, ուրիշ գործերով են զբաղվել: Ի տարբերություն Սիրիայի, Լիբանանի և ընդհանրապես Մերձավոր Արևելքի՝ մասնավոր խանութ-արհեստանոցներ չկային այստեղ: Խորհրդային արդյունաբերությունը տեղ չէր թողել մասնավոր արհեստագործությանը: Ուստի և տարբեր արհեստների տիրապետող վարպետները աշխատանքի էին անցնում պետության հիմնած գործարաններում, մեծ արտադրություններում: Նրանք հիմնականում աշխատել են որպես նորոգող վարպետներ: Պետք է նաև նշել, որ ներգաղթը կազմակերպողները նպատակ չունեին ներգաղթյալների արհեստագործական ներուժը օգտագործելու: Այս մասին հետաքրքրական վկայություն կա նշանավոր պղնձագործ, Այնթապի ինքնապաշտպանության կազմակերպիչներից Ավետիս Գալեմքերյանի նամակներից մեկում [5] (նա ևս 1947-ին նպատակ է ունեցել հայրենադարձվել Հայաստան): Նա ներգաղթի կազմակերպման ձևի մասին իր դժգոհությունը արտահայտել է ամերիկաբնակ այնթապցիների միությանը գրած նամակում: Ըստ վարպետի՝ արհեստագործությունը հայրենիքին օգտակար կարող էր լինել այն դեպքում, եթե փոխկապակցված արհեստներն ու արհեստավորները միասին տեղափոխվեին: Փաստորեն միմյանց հետ տասնամյակներով համագործակցող արհեստավորները իրար կորցնում էին թե՛ Սիրիայում և թե՛ հայրենիքում:

Հայաստանում արհեստի գծով աշխատած մեզ հայտնի վարպետներից է Լևոն Պեքերյանը: Նա աշխատել է Երևանի գեղարվեստական արտադրությունների գործարանում, պղնձի բաժնում: Լևոնի մայրը Այնթապի նշանավոր վարպետ Մելքոն Գալեմքերյանի աղջիկն էր՝ Տուտուն: Նրա հայր Գափլանը զոհվել էր Այնթապի ինքնապաշտպանական կռիվներում: Մանուկ հասակից Լևոնը աշխատելով վարպետացել էր երկու անվանի քեռիների՝ Ավետիսի և Հարությունի ձեռքի տակ: Մինչև 1961 թվականը նրանց արհեստանոցը եղել է Հալեպի Խանտակ փողոցում:

Մեզ հայտնի մյուս օրինակը Արև Արսլանյանի հետ է կապված: Նա համբավավոր այնթապցի վարպետ Բաբաշահի թոռնիկն էր՝ Ներսես Արսլանյանի որդին: Արևը ուղղակի իմաստով չի շարունակել արհեստը: Նրա փորձառությունը գործի ծառայեց գեղարվեստի ոլորտում: Մեզանում քչերն են տեղյակ, որ Երվանդ Քոչարի հանրահայտ «Սասունցի Դավիթ» արձանը պղնձից կոփել է Արև Արսլանյանը:

Պետք է նշել, որ բազմաթիվ հայրենադարձված հայեր հետագա տարիներին հեռացան Հայաստանից: Չխորանալով պատճառների մեջ՝ նշենք, որ թե՛ Արև Արսլանյանը և թե՛ Լևոն Պեքերյանը նույնպես հեռացողներից են եղել: Առաջինը տեղափոխվեց Ֆրանսիա, իսկ երկրորդը՝ Միացյալ Նահանգներ:

Եզրակացություն: Ընդհանրացնելով պետք է արձանագրենք, որ Մերձավոր Արևելքի արհեստագործությունը Հայաստանում շարունակություն չգտավ: Դա պայմանավորված էր հասարակական կյանքի մեջ տեղի ունեցած մեծ փոփոխություններով: Մի կողմից՝ Խորհրդային Հայաստանը ոտք էր դրել արտադրողական այնպիսի ուղի, որտեղ արհեստագործությունը տեղ չուներ: Մյուս կողմից՝ կենցաղում օգտագործվող նորահայտ սպասքները ինքնաբերաբար դուրս մղեցին ավանդական պղնձե առարկաները: Նորաձև, մոդայիկ ճաշամանները, ջրամանները, ափսեները վերջ դրեցին հազարամյակներ ձգվող պղնձի և պղնձագործության ժամանակաշրջանին:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. ԳԵՆԵՐԱԼ-ԼԵՅՏԵՆԱՆՏ ՖՈՄԱ ԻՎԱՆԻ ՆԱԶԱՐԲԵԿՈՎԻ ՀՈՒՇԵՐԸ.- Երևան, 2013:
2. Հայաստանի պետական արխիվ, 362-16-17,19,20,21,22,80,84,101, 105, 106, 108, 112, 113 (ՀԱԱ, Ֆ.362, Արտասահմանից վերադարձած հայերի ընդունման եւ տեղավորման կոմիտե):
3. Հայաստանի պետական արխիվ, 362-16-17,19,20,21,22,84,85,103,
4. **Թորմաճեան Հ.**, ԳԱԼԷՄՔԵԱՐԵԱՆՆԵՐ, ԱՅՆԹԱՊ-ԴԱՄԱՍԿՈՍ-ՀԱԼԷՊ, Հայէպ, 2016:
5. **Պերճ Մ. Կարապետեան** ՀԱՅԿԱԶԵԱՆԻ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԷՍ, ԺԲ. Պէյրուֆ, 1992թ., «Տիվիթ Կոչումա Թափձու Գրչակալ Կաղամարներ Հայերէն Արձանագրութիւններով», էջ 98:

Ր.Գ. ТОКМАДЖЯН

**МЕДНИКИ - РЕПАТРИАНТЫ И МЕДНЫЕ ПРЕДМЕТЫ В
СОВЕТСКОЙ АРМЕНИИ**

Представлены данные о ремесленниках, переехавших в Советскую Армению после Второй мировой войны, некоторые особенности их деятельности в новых условиях. Изучаются характеристики предметов быта из меди, перевезенных в Армению в тот же период, образцы медных предметов, хранящихся в музеях и частных коллекциях, перевезенных в Армению вместе с репатриантами.

Ключевые слова: медник, репатриант, ремесло, личность, артефакт.

Ռ.Ռ. ԹՈՒՄԱԿՅԱՆ

**THE REPATRIATE COPPERSMITHS AND COPPER OBJECTS IN SOVIET
ARMENIA**

Data on the artisans who moved to Soviet Armenia after the Second World War, some features of their activities under the new conditions are presented. The characteristics of household items made of copper transported to Armenia in the same period, samples of copper items stored in museums and private collections transported to Armenia by the repatriates are studied.

Keywords: coppersmith, repatriation, craft, identity, artifact.

ՀՏԴ 004.92

Ս.Մ. ՍԱՐԳՍՅԱՆ, Ի.Ա. ՎԱՐԴԱՆՅԱՆ

**ԱՆԻՄԱՑԻՈՆ ԿԱՐՃԱՄԵՏՐԱԺ ՖԻԼՄԵՐԸ՝ ՈՐՊԵՍ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ
ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԲԱՂԱԴՐԻՉ**

Դիտարկվում են տեղեկատվական տեխնոլոգիաների երկչափ և եռաչափ գրաֆիկայի ուղղությանն առնչվող հարցեր: Մասնավորապես՝ ներկայացվում են համակարգչային երկչափ և եռաչափ անիմացիոն ֆիլմերի ստեղծման ընթացքում կիրառվող անիմացիայի հնարավորությունները և օգտագործման ոլորտները:

Առանցքային բառեր. երկչափ գրաֆիկա, եռաչափ գրաֆիկա, անիմացիա, անիմացիոն ֆիլմ, ուսումնական գործընթաց:

Ներածություն: Ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացումը, հանրակրթության բնագավառում ներդրվող փոփոխությունները զարկ տվեցին համակարգչային երկչափ և եռաչափ մոդելավորման զարգացմանը: Երկչափ և եռաչափ գրաֆիկական ծրագրերի կիրառությունը, դրանց միջոցով